

ՀՀ Էլեկտրոնային Առողջապահական Համակարգ (Համառոտագիր)

ՀՀ-ում առողջապահության թվայնացման ոլորտը, որն ընդգրկում է էլեկտրոնային առողջապահական համակարգը (Համակարգ), վերջին տասնամյակում զգալի զարգացումներ է գրանցել: Վերջինիս նպատակն է ապահովել պացիենտների տվյալների մատչելիություն, պահպանություն, թափանցիկություն և առողջապահական ծառայությունների արդյունավետության բարձրացում՝ նպաստելով առողջապահական ապահովագրության ներդրմանը:

Գլխավոր Մարտահրավերները

1. Իրավական Կարգավորումներ: Համակարգի գործածությունը ՀՀ-ում պարտադիր է դարձել բոլոր բժշկական հաստատությունների համար, սակայն իրավական կարգավորումները դեռևս բացեր ունեն: Օրինակ՝ Համակարգում պացիենտին տրվող էլեկտրոնային տեղեկատվության պատուհանում պահվող պացիենտի տվյալները դիտելու կանոնները, պացիենտի (կամ նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ տեղեկատվությանը ծանոթանալու անձանց և վերջիններիս իրավասության շրջանակը, պացիենտի էլեկտրոնային տեղեկատվության հասանելիության պատուհան մուտք գործելու և նրա անձնական, ներառյալ՝ հատուկ կատեգորիայի տվյալները դիտելու հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ ԱՆ հրամանով սահմանված համաձայնության ձևերը միշտ չէ, որ ներկայացվում են պացիենտներին նախքան որևէ բժշկական ծառայություն ստանալը:

2. Տվյալների Գաղտնիություն: Համակարգում հավաքագրվում են զգայուն տվյալներ՝ ինչպես բնակչության առողջական, այնպես էլ անձնական: Հարկավոր է ամրապնդել տվյալների պահպանման միջոցառումները, քանի որ պացիենտների տվյալները կարող են դառնալ խոցելի:

3. Հասանելիություն և Տվյալների Հավաստիություն: Հիմնական դժվարություններից է Համակարգում պացիենտի տվյալների հասանելիության սահմանափակումները՝ հատկապես խարանվող հիվանդությունների դեպքում: Ներկայումս թույլտվությունների երկու ուղղություն է հասանելի, ինչը հաճախ բավարար չէ պացիենտների իրավունքները լիարժեք պաշտպանելու համար:

4. Հավելվածի Թերացումներ: Համակարգի բջջային հավելվածը բախվում է տեխնիկական խնդիրների, հատկապես նույնականացման գործընթացում, ինչը խոչընդոտում է պացիենտներին իրենց տվյալները տեսնելու և կառավարելու հնարավորությունը:

Առաջարկներ

1. Իրավական կարգավորումների կատարելագործում՝
 - օրենսդրորեն հստակեցնել, թե որ սուբյեկտներն իրավունք ունեն մուտքագրելու տվյալները Համակարգում և որոնք են վերջիններիս պատասխատվատվության շրջանակները,
 - ապահովել պացիենտի համաձայնության ձևերի ավելի լայն ու հստակ սահմանում՝ վերջիններիս տվյալների մուտքի ու օգտագործման համար:
2. Համակարգն օգտագործողների հմտությունների զարգացում՝

- օրենսդրորեն ամրագրել առողջապահության ոլորտի անձնակազմի պարտադիր վերապատրաստում Համակարգին տիրապետելու վերաբերյալ,
 - աջակցել բժիշկներին և բուժքույրերին՝ կազմակերպելով պարբերական վերապատրաստումներ, որոնք կներառեն նոր ֆունկցիոնալ հնարավորություններ:
3. Տվյալների անվտանգության բարելավում՝
- օգտագործել նորարարական տեխնոլոգիաներ, օրինակ՝ «blockchain», անձնական տվյալների անվտանգության և թափանցիկության ապահովման համար,
 - ապահովել արհեստական բանականության (AI) կիրառումը տվյալների վերլուծության և պահպանման գործընթացում՝ հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով:
4. Տվյալների թարմացում և բռնուսային համակարգի կիրառում՝
- ներդնել բռնուսային համակարգ, որով բուժաշխատողները խրախուսվեն պարբերաբար թարմացնել տվյալները,
 - սահմանել հստակ ընթացակարգեր տվյալների հավաքագրման և թարմացման համար:
5. Հիվանդությունների ռեգիստրների ընդլայնում՝
- հիվանդությունների ռեգիստրների ներդրումը կարևոր կլինի առողջապահական համակարգում, ինչը թույլ կտա հստակ գնահատել հիվանդությունների տարածվածությունն ու ստեղծել նպատակային ռազմավարություններ:
6. Առողջության անձնագրի ներդրում՝
- ներդնել էլեկտրոնային անձնական «առողջության անձնագիր», որտեղ կպահպանվեն պացիենտների առողջական հիմնական տվյալները, որոնք անհրաժեշտ են շտապ բժշկական միջամտության համար:
7. Հավելվածների կատարելագործում՝
- հավելվածն օգտագործողների շրջանում անցկացնել կարիքների գնահատում, այն առավել արդյունավետ դարձնելու խնդիրները հասկանալու նպատակով,
 - ընդլայնել հավելվածի ֆունկցիոնալությունը և հասանելիությունը: